Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

(Գործառություն թիվ 46540)

**2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԹԻՎ 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԵՎ**

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ**

**ՄԻՋԵՎ**

Ամսաթիվ՝ 16 փետրվարի, 2024թ.

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԹԻՎ 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Փոփոխություններ կատարելու մասին 2024 թվականի փետրվարի 16-ի սույն համաձայնագիրը (**Փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր**) կնքվել է հետեւյալ կողմերի կողմից եւ միջեւ.

1) **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ** (**Վարկառու**), և

2) **ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ՝** պայմանագրի հիման վրա ստեղծված միջազգային կազմակերպություն **(Բանկ)**:

**ՆԱԽԱԲԱՆ**

**ՔԱՆԻ ՈՐ՝**

Ա) Վարկառուն 2016 թվականի մայիսի 11-ին Բանկի հետ կնքել է վարկային համաձայնագիր, որը փոփոխվել է 2022 թվականի փետրվարի 14-ին (**Սկզբնական վարկային համաձայնագիր**).

Բ) Վարկառուն մտադիր է իրականացնել Գյումրու երկու՝ Անի եւ Ավստրիական թաղամասերի քաղաքային ճանապարհների բարեկարգման եւ հարակից փողոցների լուսավորման աշխատանքներ եւ Բանկից խնդրել է լրացուցիչ ֆինանսավորում 2,720,000 Եվրոյի չափով.

Գ) Բանկը գտնվում է տեխնիկական համագործակցության լրացուցիչ միջոցների կազմակերպման գործընթացում՝ դրամաշնորհային հիմունքներով ընդհանուր մինչեւ 750,000 Եվրոյի չափով աջակցելու Վարկառուին Ծրագրի՝ Գյումրու երկու՝ Անի եւ Ավստրիական թաղամասերի քաղաքային ճանապարհների բարեկարգմանը եւ հարակից փողոցների լուսավորությանն առնչվող մասերի իրականացման հարցում.

Դ) Վարկառուն և Բանկը ցանկանում են փոփոխություններ կատարել Սկզբնական վարկային համաձայնագրի որոշ կետերում՝ Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրի դրույթների վերաբերյալ և դրանց համապատասխան.

**ՀԵՏԵՎԱԲԱՐ** սույն համաձայնագրի կողմերը համաձայնում են հետևյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Բաժին 1.01. Ստանդարտ պայմանների ներառումը**

ա) Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում են Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրում եւ դառնում են կիրառելի դրա նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, ինչպիսին դրանք կունենային, եթե ամբողջությամբ սահմանված լինեին սույն համաձայնագրում:

բ) Ստանդարտ պայմանները կիրառվում են այնպես՝ կարծես Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագիրը «Վարկային համաձայնագիր» է՝ դրա նպատակներով, բացառությամբ նրա, որ Ստանդարտ պայմանների IX հոդվածը (*Ուժի մեջ մտնելը. Դադարեցումը*) չի կիրառվում Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրի նկատմամբ:

**Բաժին 1.02. Սահմանումները եւ մեկնաբանությունները**

ա) Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրում՝

**«Փոփոխված վարկային համաձայնագիր»** նշանակում է Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրով փոփոխված Սկզբնական համաձայնագիրը:

**«Ուժի մեջ մտնելու ամսաթիվ»** նշանակում է այն ամսաթիվը, երբ

Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագիրը 2.03 բաժնի համաձայն մտնում է ուժի մեջ:

**«Սկզբնական վարկային համաձայնագիր»**՝ ունի Նախաբանում դրան տրված նշանակությունը:

**«Ստանդարտ պայմաններ»** նշանակում է Բանկի՝ 2012 թվականի դեկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ պայմանները (**2012 թվականի ստանդարտ պայմաններ**) կամ Բանկի՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ով թվագրված Ստանդարտ պայմանները (**2021 թվականի ստանդարտ պայմաններ**) (ըստ կիրառելիության):

բ) Սկզբնական վարկային համաձայնագրում սահմանված եզրույթները (ուղղակիորեն կամ հղում կատարելով որեւէ այլ համաձայնագրի կամ փաստաթղթի) ունեն նույն նշանակությունը, ինչ Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրում, եթե սույն համաձայնագրում այլ բան նախատեսված չէ: Սկզբնական վարկային համաձայնագրի 1.02 բաժնի դրույթները գործում են այնպես, ինչպես Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրում, *mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով)*, ամբողջությամբ սահմանված լինելու դեպքում:

գ) Սկզբնական վարկային համաձայնագիրը եւ Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագիրը պետք է ընթերցվեն եւ մեկնաբանվեն որպես մեկ փաստաթուղթ:

## ՀՈԴՎԱԾ II. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Բաժին 2.01. Փոփոխությունները եւ շարունակականությունը

ա) Ուժի մեջ մտնելու օրը եւ այդ օրվանից Սկզբնական վարկային համաձայնագիրը փոփոխվում է սույն համաձայնագրի 1-ին հավելվածում նշված կարգով:

բ) Սկզբնական վարկային համաձայնագրի դրույթները, բացառությամբ Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրով փոփոխվածների, շարունակում են ամբողջությամբ մնալ ուժի եւ գործողության մեջ:

**Բաժին 2.02. Լրացուցիչ երաշխիքներ**

Վարկառուն ՎԶԵԲ-ի պահանջով կատարում է այն բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ կամ ցանկալի են Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրի համաձայն կատարված կամ կատարվելիք փոփոխությունները գործողության մեջ դնելու համար:

**Բաժին 2.03. Ուժի մեջ մտնելու ամսաթիվը**

Ուժի մեջ մտնելու ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ Բանկը Վարկառուին ուղարկում է ծանուցում Բանկի կողմից սույն բաժնի համաձայն պահանջվող ապացույցների ընդունման մասին.

ա) Բանկը բավարարված է, որ 2021 թվականի ստանդարտ պայմանների 7.01 բաժնի «ա» կետում կամ 7.06 բաժնում նշված որեւէ իրադարձություն տեղի չի ունեցել եւ չի շարունակվում.

բ) Վարկառուի անունից Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրի կնքումը եւ հանձնումը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել են պետական եւ կորպորատիվ բոլոր անհրաժեշտ գործողություններով, եւ

գ) կնքվել եւ Բանկին է հանձնվել Ծրագրի մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը՝ Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ, եւ կատարվել են այն ուժի մեջ մտնելու բոլոր նախապայմանները՝ բացառությամբ միայն Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու:

## ՀՈԴՎԱԾ III. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

**Բաժին 3.01. Այլ դրույթներ**

ա) Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի նպատակներով կիրառելի են Փոփոխված վարկային համաձայնագրում նշված ծանուցումների հասցեները.

բ) Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագրի ամսաթվից սկսած՝ Սկզբնական վարկային համաձայնագրում «Համաձայնագիր» բառին արված բոլոր հղումները եւ դրա հիման վրա կնքված բոլոր փաստաթղթերում եւ համաձայնագրերում, ներառյալ, առանց սահմանափակման, Ծրագրի մասին համաձայնագրում Սկզբնական վարկային համաձայնագրին արված բոլոր հղումները վերաբերում են Փոփոխված վարկային համաձայնագրին, իսկ Ստանդարտ պայմանների նպատակներով «Վարկային համաձայնագիրը» Փոփոխված վարկային համաձայնագիրն է:

**Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝** սույն համաձայնագրի կողմերը, գործելով իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով, կնքեցին Փոփոխություններ կատարելու մասին սույն համաձայնագիրը եւ հանձնեցին այն վերեւում առաջինը նշված ամսաթվին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

/ստորագրություն/

Անուն՝ Վահե Հովհաննիսյան

Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ**

/ստորագրություն/

Անուն՝ Գեորգի Ախալկացի

Պաշտոն՝ Կրտսեր տնօրեն, ՎԶԵԲ երևանյան գրասենյակի ղեկավար

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1. Ներածական դրույթների վեցերորդ պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալ պարբերությամբ**

«**ՔԱՆԻ ՈՐ** Բանկը համաձայնել է դրամաշնորհային հիմունքներով տրամադրել ընդհանուր մինչեւ 2,921,600 եվրոյի չափով տեխնիկական համագործակցության միջոցներ (ՏՀ դրամաշնորհներ)՝ աջակցելու Վարկառուին Ծրագրի իրականացման հարցում. եւ»:

**2. Ներածական դրույթների յոթերորդ պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալ պարբերությամբ**

«**ՔԱՆԻ ՈՐ** Բանկը համաձայնել է, *inter alia (ի թիվս այլնի)*, վերոնշյալի հիման վրա Վարկառուին տրամադրել 17,320,000 եվրո գումարի չափով վարկ՝ սույն համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններին համապատասխան.»:

**3. Սկզբնական վարկային համաձայնագրի 1.01 բաժնի առաջին պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալ պարբերությամբ**

«Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները սույնով ներառվում են սույն համաձայնագրում եւ դառնում են կիրառելի դրա նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, ինչպիսին դրանք կունենային, եթե ամբողջությամբ սահմանված լինեին սույն համաձայնագրում, սակայն հետեւյալ փոփոխություններին համապատասխան (այդ կերպ փոփոխված դրույթներն այսուհետ կոչվում են Ստանդարտ պայմաններ): Սույն համաձայնագրի նպատակներով «Ստանդարտ պայմաններ» նշանակում է՝ 1) ստորեւ՝ 2-րդ ենթապարբերությանը համապատասխան՝ 2012 թվականի ստանդարտ պայմանները, եւ 2)

Փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ՝ 2021 թվականի ստանդարտ պայմանները»:

**4. Սկզբնական վարկային համաձայնագրի 1.01(բ) բաժնի «Արգելված պրակտիկայի» սահմանումը հանել եւ փոխարինել հետեւյալ պարբերությամբ.**

| | |
|---|---|
| ««Արգելված պրակտիկա» | (ա) սույն Համաձայնագրի օրվանից մինչև Փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագրի ուժի մեջ մտնելը չհաշված, ունի այն նշանակությունը, որը տրված է Սկզբնական վարկային համաձայնագրում, և<br>բ) Փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած և ներառյալ, ունի 2021 թվականի Ստանդարտ պայմաններում դրան տրված նշանակությունը»: |

**5. Սկզբնական վարկային համաձայնագրի 1.01 բաժնի «դ» կետում նշված «Հասանելի գումար» սահմանումը հանել եւ փոխարինել հետեւյալ սահմանումով**

| | |
|---|---|
| ««Հասանելի գումար» | նշանակում է Վարկի Տրանշ Ա-ի այն գումարը, որը տվյալ պահի դրությամբ չի չեղարկվել կամ մասհանվել կամ ենթարկվել Փոխհատուցման պայմանական կամ անվերապահ պարտավորության՝ գումարած (i) Տրանշ Բ-ի հասանելիության ամսաթվի դրությամբ Վարկի Տրանշ Բ-ի այն գումարը, որը տվյալ պահի դրությամբ չի չեղարկվել կամ մասհանվել կամ ենթարկվել Փոխհատուցման պայմանական կամ անվերապահ պարտավորության, (ii) գումարած Տրանշ Գ-ի |

հասանելիության ամսաթվի դրությամբ Վարկի Տրանշ Գ-ի այն գումարը, որը տվյալ պահի դրությամբ չի չեղարկվել կամ մասհանվել կամ ենթարկվել Փոխհատուցման պայմանական կամ անվերապահ պարտավորության, եւ (iii) գումարած Տրանշ Դ-ի հասանելիության ամսաթվի դրությամբ Վարկի Տրանշ Դ-ի այն գումարը, որը տվյալ պահի դրությամբ չի չեղարկվել կամ մասհանվել կամ ենթարկվել Փոխհատուցման պայմանական կամ անվերապահ պարտավորության (իսկ սույն սահմանման մեջ մեծատառով օգտագործված եւ սույն փաստաթղթում այլ կերպ չսահմանված բոլոր եզրույթներն ունեն Վարկային համաձայնագրում դրանց տրված նշանակությունը)»:

**6 Սկզբնական վարկային համաձայնագրի 1.01 բաժնի «ե» պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալ պարբերությամբ**

«ե) Սույն համաձայնագրի նպատակներով 2021 թվականի ստանդարտ պայմանների 3.05 բաժնի (*Պարփավճարը եւ վարկի փրամադրման միանվագ միջնորդավճարը*) «ա»-ից «գ» պարբերությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ

«ա) Վարկառուն Բանկին վճարում է պարտավճար՝ Վարկային համաձայնագրով սահմանված դրույքաչափով, որը ենթակա է վճարման Հասանելի ընդհանուր գումարի նկատմամբ, գումարած Վարկի ցանկացած գումար, որը ենթակա է Փոխհատուցման պարտավորության եւ դեռեւս չի մասհանվել՝ պայմանով, որ Փոխհատուցման անվերապահ պարտավորության ենթակա Վարկի գումարի նկատմամբ վճարման ենթակա Պարտավորավճարը տարեկան 0,5%-ով ավելի է, քան Վարկային համաձայնագրում նշված

Պարտավորավճարի դրույքաչափը: Պարտավորավճարը հաշվեգրվում է՝

1) Տրանշ Ա-ի համար՝ սկսած Վարկային համաձայնագրի կնքման ամսաթվից հետո վաթսուներորդ (60) օրվանից, եւ

2) Տրանշ Բ-ի համար՝ սկսած Տրանշ Բ-ի հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ (7) օրվանից, եւ

3) Տրանշ Գ-ի համար՝ սկսած Տրանշ Գ-ի հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ (7) օրվանից, եւ

3) Տրանշ Դ-ի համար՝ սկսած Տրանշ Դ-ի հասանելիության ամսաթվից հետո յոթերորդ (7) օրվանից, կամ

4) Փոխհատուցման անվերապահ պարտավորության ենթակա Վարկի գումարի նկատմամբ վճարման ենթակա Պարտավճարի դեպքում՝ Փոխհատուցման այդպիսի անվերապահ պարտավորության թողարկման ամսաթվից.

եւ Պարտաավճարը հաշվեգրվում եւ հաշվարկվում է նույն հիմքով, ինչ 3.04 բաժնի «բ» կետի (ii) ենթակետով սահմանված տոկոսը: Պարտավորավճարը ենթակա է վճարման Տոկոսագումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվի (թեեւ հնարավոր է, որ այդ ամսաթվին որեւէ տոկոսագումար վճարման ենթակա չլինի)՝ սկսած Ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող Տոկոսագումարի վճարման առաջին օրվանից:»:

(բ) Վարկառուն Բանկին պետք է վճարի միջնորդավճար, որը հավասար է.

(1) Տրանշ Ա-ի, Տրանշ Բ-ի և Տրանշ Գ-ի ընդհանուր մայր գումարի մեկ տոկոսը (1%) (կամ Վարկային պայմանագրում նշված այլ գումար). և

(2) Տրանշ Դ-ի մայր գումարի մեկ տոկոսը (1%) (կամ Վարկային պայմանագրում նշված այլ գումար):

(գ) Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան նախատեսված է Վարկային պայմանագրով, Բանկը Վարկառուի անունից հանում է Առկա Գումարից.

(1) Տրանշ Ա-ի, Տրանշի Բ-ի և Գ-ի մասով, ուժի մեջ մտնելու ամսաթվից կամ դրանից հետո յոթ (7) օրվա ընթացքում, և ինքն իրեն վճարի 3.05(բ)(1) բաժնի համաձայն վճարման ենթակա միջնորդավճարի գումարը և

(2) Տրանշ Դ-ի հետ կապված՝ Տրանշ Դ-ի հասանելիության ամսաթվին կամ դրանից հետո յոթ (7) օրվա ընթացքում, և ինքն իրեն վճարի 3.05(բ)(2) բաժնի համաձայն վճարման ենթակա միջնորդավճարի գումարը»:

**7. Սկզբնական Վարկային համաձայնագրի 1.01-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր դրույթներով.**

«է) 2021 թվականի Ստանդարտ պայմանների 2.02 բաժնում (Սահմանումներ) «Վարկի» սահմանումը, սույն Համաձայնագրի նպատակների համար, պետք է փոփոխվի հետևյալ կերպ.

«Վարկ» նշանակում է Վարկային համաձայնագրով նախատեսված փոխառություն, որը բաղկացած է տրանշ Ա-ից, տրանշ Բ-ից, տրանշ Գ-ից և տրանշ Դ-ից»:

**8. Սկզբնական վարկային համաձայնագրի 1.02 բաժինը փոփոխել՝ այբբենական կարգով ավելացնելով հետևյալ նոր սահմանումները.**

««2012 թվականի ստանդարտ պայմաններ»

նշանակում է Բանկի՝ 2012 թվականի դեկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ պայմանները (Սկզբնական վարկային համաձայնագրով կատարված փոփոխություններով):»

««2021 թվականի ստանդարտ պայմաններ»

նշանակում է Բանկի՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ով թվագրված Ստանդարտ պայմանները (Փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագրով կատարված փոփոխություններով):»

««Փոփոխություններ կատարելու մասին թիվ 1 համաձայնագիր»

նշանակում է Վարկառուի եւ Բանկի միջեւ 2022 թվականի փետրվարի 14-ին կնքված Սկզբնական վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:»

««Փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագիր»

նշանակում է Վարկառուի եւ Բանկի միջեւ, *inter alia*, Տրանշ Դ-ի առնչությամբ կնքված՝ Սկզբնական վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:»

««Սկզբնական վարկային համաձայնագիր»

նշանակում է 2016 թվականի մայիսի 11-ով թվագրված վարկային համաձայնագիր:»

««Տրանշ Դ»

նշանակում է 2.01 բաժնի «բ» կետի 4-րդ ենթակետով նախատեսված վարկի առավելագույն մայր գումարը կամ ելնելով համատեքստից՝ դրա՝ տվյալ պահին չմարված մայր գումարը:»

««Տրանշ Դ-ի հասանելիության ամսաթիվ»

նշանակում է Բանկի կողմից Վարկառուին գրավոր ծանուցված այն ամսաթիվը, որի դրությամբ Տրանշ Դ-ն տրամադրվել է Վարկառուին:»:

**9. Սկզբնական վարկային համաձայնագրի 1.02 բաժնում սահմանված հետեւյալ եզրույթները հանել եւ փոխարինել հետեւյալ եզրույթներով**

««Տրանշ Գ»

նշանակում է 2.01 բաժնի «բ» կետի 3-րդ ենթակետով նախատեսված վարկի առավելագույն մայր գումարը կամ ելնելով համատեքստից՝ դրա՝ տվյալ պահին չմարված մայր գումարը:»

««ՏՀ դրամաշնորհային համաձայնագիր»

նշանակում է՝

ա) *ծրագրի իրականացման աջակցություն*՝ Բանկի եւ Ծրագիրն իրականացնող մարմնի միջեւ կնքվող համաձայնագիր, որով Բանկը կներգրավի ՏՀ դրամաշնորհ մինչեւ 2,109,600 եվրոյի չափով՝ ֆինանսավորելու ծրագրի իրականացման աջակցության տրամադրումը ԾԻԽ-ի միջոցով,

բ) *քաղաքի շարժունակության ակտիվների կառավարման եւ բարելավման ծրագիր*՝ Բանկի եւ Ծրագիրն իրականացնող մարմնի միջեւ կնքվող համաձայնագիր, որով Բանկը կներգրավի ՏՀ դրամաշնորհ մինչեւ 300,000 եվրոյի չափով՝ ֆինանսավորելու քաղաքի շարժունակության ակտիվների կառավարման եւ բարելավման ծրագրի նախապատրաստումը, եւ

գ) *կայանատեղիների ռազմավարություն եւ դրա հետ կապված գործողությունների ծրագիր*՝ Բանկի եւ Ծրագիրն իրականացնող մարմնի միջեւ կնքվող համաձայնագիր, որով Բանկը կներգրավի ՏՀ դրամաշնորհ մինչեւ 172,000 եվրոյի չափով՝ ֆինանսավորելու կայանատեղիների երկարաժամկետ ռազմավարության եւ միջնաժամկետ գործողությունների ծրագրի մշակումն ավտոկայանատեղիների հատվածի համար, ներառյալ՝ կայանատեղիների փորձնական նախագծի սահմանումը:»:

**10. Սկզբնական վարկային համաձայնագրի 2.01 բաժնի «ա» պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալով.**

« (ա) Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել 17,320,000 եվրո գումար՝ սույն Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով»:

**11. Սկզբնական վարկային համաձայնագրի 2.01 բաժնի «բ» պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալով.**

«բ) Վարկը բաղկացած է չորս տրանշից՝ հետևյալ կերպ.

(1) Տրանշ Ա՝ 5,300,000 եվրոյի չափով.

(2) Տրանշ Բ՝ 5,300,000 եվրոյի չափով.

(3) Տրանշ Գ՝ 4,000,000 եվրոյի չափով; և

(4) Տրանշ Դ՝ 2,720,000 եվրոյի չափով:».

**12. Սկզբնական վարկային համաձայնագրի 2.02 բաժնի «ե» պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալ պարբերությամբ**

«ե) 1) Վարկառուն Տրանշ Ա-ն, Տրանշ Բ-ն եւ Տրանշ Գ-ն մարում է 24 կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին, ընդ որում, Վարկի առաջին մարման ամսաթիվը կհամարվի Տոկոսագումարի վճարման ամսաթիվը, որը Վարկային համաձայնագրի ստորագրման երրորդ տարին լրանալու օրն է կամ դրանից անմիջապես հետո, իսկ Տրանշ Ա-ի, Տրանշ Բ-ի եւ Տրանշ Գ-ի մասով Վարկի վերջին մարման ամսաթիվը 2031 թվականի ապրիլի 16-ն է:

2) Վարկառուն Տրանշ Դ-ն մարում է 24 կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին, ընդ որում, Տրանշ Դ-ի համար Վարկի առաջին մարման ամսաթիվը կհամարվի Տոկոսագումարի վճարման ամսաթիվը, որը Փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագրի ստորագրման երրորդ տարին լրանալու օրն է կամ դրանից անմիջապես հետո, իսկ Տրանշ Դ-ի մասով Վարկի վերջին մարման ամսաթիվը 2038 թվականի հոկտեմբերի 16-ն է:

3) Չհակասելով վերոնշյալին՝ այն դեպքում, երբ i) Վարկառուն չի մասհանում Տրանշ Ա-ի եւ (կամ) Տրանշ Բ-ի եւ (կամ) Տրանշ Գ-ի եւ (կամ) Տրանշ Դ-ի ամբողջ գումարը, ըստ կոնկրետ դեպքի, մինչեւ սույն 2.02 բաժնի «ե» կետում նշված՝ համապատասխան Տրանշի նկատմամբ կիրառելի Վարկի մարման առաջին օրը, եւ ii) Բանկը ստորեւ՝ 2.02 բաժնի «գ» կետում նշված Հասանելիության վերջին ամսաթիվը

երկարաձգում է մինչեւ Վարկի մարման առաջին օրվանից հետո ընկնող օրը, ապա Վարկի մարման առաջին օրը կամ դրանից հետո կատարված յուրաքանչյուր մասհանման գումար մարման համար պետք է հավասար չափերով բաշխվի այդ մասհանումից հետո ընկնող Վարկի մարման մի քանի օրերի միջեւ (Բանկը ճշգրտում է բաշխված գումարներն ըստ անհրաժեշտության՝ յուրաքանչյուր դեպքում ամբողջ թիվ ստանալու համար): Բանկը պետք է ժամանակ առ ժամանակ Վարկառուին ծանուցի այդ բաշխումների մասին:»:

**13. Սկզբնական վարկային համաձայնագրի 2.02 բաժնի «գ» պարբերությունը հանել եւ փոխարինել հետեւյալ պարբերությամբ**

«գ) Հասանելիության վերջին ամսաթիվը 2028 թվականի նոյեմբերի 28-ն է կամ ավելի ուշ ընկնող ամսաթիվ, որը Բանկն իր միանձնյա եւ բացարձակ հայեցողությամբ կարող է սահմանել եւ այդ մասին ծանուցել Վարկառուին:»:

**14. Սկզբնական վարկային համաձայնագրի V հոդվածը փոփոխել՝ 5.05 բաժնից առաջ ավելացնելով հետեւյալ խմբագրությամբ նոր 5.04-Ա բաժին.**

**«Բաժին 5.04-Ա. Տրանշ Դ-ի մասհանման նախապայմանները**

Տրանշ Դ-ի առաջին մասհանումը կատարելու Բանկի պարտավորությունը ենթակա է նախնական կատարման՝ Բանկին բավարարող ձեւով եւ բովանդակությամբ, կամ Բանկի միանձնյա հայեցողությամբ՝ հետեւյալ նախապայմաններից ազատման՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն եւ պայմանների կատարմամբ կամ անվերապահորեն.

ա) իրավախորհրդատուի եզրակացությունը կամ եզրակացությունները Վարկառուի անունից տրվում է (են) Արդարադատության նախարարության կողմից առ այն, որ Փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատվել կամ վավերացվել է Վարկառուի կողմից, ինչպես նաեւ հանձնվել է նրա անունից եւ Վարկառուի վավեր եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտավորություն է՝ ուժի մեջ մտնելով դրա դրույթների համաձայն, եւ

բ) Տրանշ Ա-ով, Տրանշ Բ-ով, Տրանշ Գ-ով եւ Տրանշ Ա-ի դրամաշնորհային

համաձայնագրի և Տրանշ Բ-ի դրամաշնորհային համաձայնագրի ներքո Համաֆինանսավորման դրամաշնորհներով նախատեսված բոլոր գումարներն ամբողջությամբ օգտագործվել են Վարկառուի կողմից:»:

**15. Սկզբնական վարկային համաձայնագրի 6.01 բաժնում ՎԶԵԲ-ի հասցեն փոփոխել հետեւյալ խմբագրությամբ.**

«Բանկի կողմից՝

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ

Բանկի փողոց 5

Լոնդոն E14 4BG

Միացյալ Թագավորություն

Ուղղվում է՝ Գործառնությունների կառավարման վարչություն

Հեռախոս՝ +44 20 7338 6000

Էլ. փոստ՝ oad@ebrd.com»:

**16. Սկզբնական վարկային համաձայնագրի 1-ին հավելվածը փոխարինել հետեւյալ հավելվածով**

### «ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին Գյումրի քաղաքի ճանապարհների վերանորոգման եւ հանրային լուսավորության արդիականացման հարցում, որը ներառում է՝ (i) ասֆալտի եւ մայթերի նորոգումը, ներառյալ՝ ջրահեռացման ենթակառուցվածքի արդիականացումը, (ii) նոր հետիոտնային տարածքների կառուցումը, (iii) փողոցների լուսավորության ենթակառուցվածքի վերանորոգումը, (iv) ավտոկայանատեղիների ռազմավարության եւ գործողությունների ծրագրի մշակումը Գյումրի քաղաքի համար, եւ (v) քաղաքի շարժունակության ակտիվների կառավարման եւ բարելավման պլանի կազմումը Գյումրի քաղաքի համար:

2. Ծրագիրը կազմված է հետեւյալ մասերից, որոնք ենթակա են այնպիսի փոփոխությունների, որոնց շուրջ Բանկը եւ Վարկառուն կարող են ժամանակ առ ժամանակ համաձայնության գալ:

Մաս Ա. Կապիտալ ծախսեր

- Ընտրված ճանապարհների վերանորոգում (ներառյալ՝ հետիոտնային արահետները եւ ջրահեռացման եւ ճանապարհային անվտանգության լրացուցիչ աշխատանքները) (ֆինանսավորվելու է Տրանշ Ա-ից, Տրանշ Բ-ից, Տրանշ Գ-ից եւ Տրանշ Դ-ից, ինչպես նաեւ Տրանշ Ա-ի դրամաշնորհային համաձայնագրով եւ Տրանշ Բ-ի դրամաշնորհային համաձայնագրով նախատեսված Համաֆինանսավորման դրամաշնորհներից).

- Վերանորոգված ճանապարհների փողոցային լուսավորության բարեկարգում (ֆինանսավորվելու է Տրանշ Ա-ից, Տրանշ Բ-ից եւ Տրանշ Գ-ից, ինչպես նաեւ Տրանշ Ա-ի դրամաշնորհային համաձայնագրով, Տրանշ Բ-ի դրամաշնորհային համաձայնագրով եւ տրանշ Գ-ի դրամաշնորհային համաձայնագրով նախատեսված Համաֆինանսավորման դրամաշնորհներից):

Մաս Բ. Տեխնիկական համագործակցություն.

- Ծրագրի իրականացման աջակցության ծրագիր.

- Քաղաքի շարժունակության ակտիվների կառավարման եւ բարելավման ծրագիր.

- Կայանատեղիների ռազմավարություն եւ գործողությունների ծրագիր:

3. Ծրագրի ավարտն ակնկալվում է մինչեւ 2028 թվականի նոյեմբերի 28-ը:»:

**17. Սկզբնական վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի առդիրում նշված նախագծի ծախսերի աղյուսակը հանել եւ փոխարինել հետեւյալ աղյուսակով.**

«Հավելված 2-ի առդիր

| **Կատեգորիա** | **Վարկի գումարը՝ տրամադրված Վարկի արժույթով** | **Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսային արտահայտությունը** |
|---|---|---|
| 1) Ծրագրի Ա մասի համար նախատեսված ապրանքներ, աշխատանքներ եւ ծառայություններ | | |
| - Տրանշ Ա | 5,034,000 ԵՎՐՈ | Պայմանագրային արժեքի մինչեւ 100 %-ը՝ առանց հարկերի |
| - Տրանշ Բ | 5,300,000 ԵՎՐՈ | Պայմանագրային արժեքի մինչեւ 100 %-ը՝ առանց հարկերի |
| - Տրանշ Գ | 4,000,000 ԵՎՐՈ | Պայմանագրային արժեքի մինչեւ 100 %-ը՝ առանց հարկերի |
| - Տրանշ Դ | 1,942,800 ԵՎՐՈ | Պայմանագրային արժեքի մինչեւ 100 %-ը՝ առանց հարկերի |
| 2) Միանվագ միջնորդավճար | | |

| **Կատեգորիա** | **Վարկի գումարը՝ տրամադրված Վարկի արժույթով** | **Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսային արտահայտությունը** |
|---|---|---|
| - Տրանշ Ա, Բ և Գ<br>- Տրանշ Դ | 146,000 ԵՎՐՈ<br>27,200 ԵՎՐՈ | 100%<br>100% |
| 3) ԾԻԳ-ի խորհրդատվական ծառայություններ<br>- Տրանշ Ա<br>- Տրանշ Դ | 120,000 ԵՎՐՈ<br>750,000 ԵՎՐՈ | Պայմանագրային արժեքի մինչեւ 100 %-ը՝ առանց հարկերի<br>Պայմանագրային արժեքի մինչեւ 100 %-ը՝ առանց հարկերի |
| **Ընդամենը** | **17,320,000 ԵՎՐՈ»** | |